«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- ---------- -ի 2026 թվականի N------ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի «Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշների, աղտոտվածության չափման մեթոդների և ստանդարտացված չափման մեթոդների, ինչպես նաև աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշների վերաբերյալ կարգը հաստատելու մասին» N 1142-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ?

«2?Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից։»,

2) որոշման հավելվածի Աղյուսակ 1-ում «2030 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «մինչև 2035 թվականի հունվարի 1-ը» բառերով։

2. Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի «Գոտիների և ագլոմերացիաների դասակարգման մասին» N 1145-Ն որոշման մեջ կատարել

հետևյալ փոփոխությունը և լրացումը?

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ?

«2? Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ագլոմերացիայի (ք?Երևան) համար 2027 թվականի հունվարի 1-ից։»

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով?

«3? Սույն որոշումն ամբողջությամբ ուժի մեջ է մտնում 2030 թվականի հունվարի 1-ից։»։

3? Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշման 1-ին հավելվածի « Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենետրացիաների-ՍԹԿ) նորմատիվները» աղյուսակի 2-րդ, 9-րդ, 30-րդ, 172.1-ին, 172.2-րդ կետերի 4-րդ սյունակի համապատասխանաբար «0.04», «3», «0.05», «0.035», «0.06» թվերը փոխարինել «-» կետադրական նշանով։

4? Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։